ՀԱՄԱՏԵՂ ՀՌՉԱԿԱԳԻՐ

Մենք՝ ադրբեջանցի, հայ և ռուս ժողովուրդների հոգևոր առաջնորդներս, հավաքվելով Մոսկվայում, կոչ ենք անում ամրապնդել խաղաղությունը Անդրկովկասում և սահմանակից տարածքներում:

Ուրախությամբ վկայում ենք, որ Ռուս Ուղղափառ Եկեղեցու, Հայ Առաքելական Եկեղեցու և Կովկասի մուսուլմանների ղեկավարների եռակողմ հանդիպումները բարի ավանդություն են դարձել: Վստահ ենք, որ հոգևորականության ջանքերը զգալիորեն օժանդակել են դադարեցնելու Ղարաբաղի խնդրից ծնունդ առած հայ-ադրբեջանական հակամարտության զինված փուլը, և օգնել խուսափելու խնդիրը միջկրոնական հակամարտության վերածելուց: Ինչպես և նախկինում, մենք խոստանում ենք խոսքով և գործով օժանդակել ամբողջական հաշտեցմանը, առկա վեճերի հարցերի լուծմանը և ադրբեջանցի ու հայ ժողովուրդների միջև բարիդրացիական հարաբերությունների ձեռքբերմանը՝ նրանց երկրում և սփյուռքում: Գիտակցելով, որ այդ հաճելի է Բարձրյալին, պետք է ձգտենք կատարել Նրա կամքը:

Այժմ, երբ ձեռք է բերվել և պահպանվում է զինադադարը, կենսականորեն կարևոր է, որ թույլ չտանք վերադառնալ պատերազմի միջոցով վիճելի հարցերի լուծմանը: Հակամարտությունը, որ արդյունք է աղեփաբեր բռնատիրական համակարգի ազգային քաղաքականության, պետք է հաղթահարվի երկու ժողովուրդների օրինական հետաքրքրությունները հաշվի առնելով, կողմերի համաձայնությամբ և միջազգային համակեցության ճանաչված չափանիշների համաձայն: Մարդկանց մեջ չպետք է մեռնի ներկա բաժանումների և թշնամության շուտափույթ ապաքինման հույսը:

Մենք՝ պաշտպանում ենք ադրբեջանա-հայկական հակամարտության կարգավորման միջազգային ջանքերը, հատկապես գնահատում ենք Ռուսաստանի դերը և կոչ ենք անում առավել գործուն աշխատանքներ կատարել հանուն փոխհամաձայնեցված պայմանավորվածության ձեռքբերման: Մեզ չի կարող չուրախացնել նաև երկու պետությունների նախագահների միջև անկեղծ երկխոսության հաստատումը, որին մասնակցում է նաև ռուս ղեկավարությունը:

Միաժամանակ կուզենայինք նախազգուշացնել, որ Անդրկովկասում կատարվող գործընթացները շահագործվում են, որպեսզի ուժերի ստեղծված հավասարակշռությունը արհեստականորեն փոփոխության ենթարկվի, այն վերջնական հաշվով, որ աճեն «այս աշխարհի ուժեղ» քաղաքական, տնտեսական և զինվորական շահերը: Դրանից ավելի մեզ անհանգստացնում է ծայրահեղական խմբակցությունների ներխուժման վտանգը հակամարտության տարածք, որով վերստին կհրահրվի արյունահեղությունը:

Ամուր խաղաղություն և բարիդրացիական հարաբերություններ ձեռք բերելու համար անհրաժեշտ է ամրացնել վստահությունը և անկեղծությունը, ընդլայնել հայ և ադրբեջանցի ժողովուրդների ներկայացուցիչների հարաբերությունները: Մենք վճռականորեն դատապարտում ենք մարտնչող ազգայնամոլությունը, օտարատեցությունը, էթնիկական գերազանցության տարփողումը, ազգային զգացումների նվաստացումը: Չափազանց կարևոր ենք համարում, որ քաղաքագետները, թղթակիցները, հասարակական գործիչները խուսափեն ազգերի հանդեպ ունեցած իրենց բացասական զգացումներն արտահայտելուց և հաշտության, համաձայնության ու համագործակցության գաղափարներ տարածեն: Մենք նաև կոչ ենք անում հարգել ազգային փոքրամասնությունների իրավունքները, նրանց կրոնական և մշակութային ավանդույթները:

Աղոթում ենք Բարձրյալին, որ Կովկասի բարեբեր հողի վրա ամուր և արդար խաղաղություն հաստատվի, որպեսզի այնտեղ ապրող ժողովուրդները հաճույքը զգան լիակատար կյանքի, ժառանգեն բարօրություն և ծաղկում, օգնեն միմյանց ընդհանուր տուն կառուցելու գործին:

ԱԼԵՔՍԻ Բ
ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ

ԱԼԱՀՇՈՒՔՅՈՒՐ ՓԱՇԱ-ԶԱԴԵ
ԿՈՎԿԱՍԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՎԵՐԻՆ
ԿՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ԱԴՐԲԵՋԱՆԻ
ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ, ՇԵՅԽ-ՈՒԼ-ԻՍԼԱՄ

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ